ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 22-ը Մինսկում տեղակայված ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման արդյունքների վերաբերյալ

2017 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 22-ը Մինսկում տեղակայված ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգում՝ Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Կիրգիզիայի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ստուգման աշխատանքների ղեկավարման գործընթացը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչի կողմից:

Առաջադրված ընդհանուր հարցերից իմ կողմից՝ որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ, կատարվել է հետևյալ հարցերի ընտրանքային ստուգում.

1. Աշխատավարձի և այլ վճարումների ճշգրտության ստուգում, այդ թվում.

- դրանց հաշվառումը և արտացոլումը հաշվետվություններում,
- փաստացի ծախսերի և ներկայացված բյուջեի ֆինանսավորման փաստաթղթերի համապատասխանություն ստուգում:

2. Հիմնական միջոցների, նյութերի, ցածրարժեք առարկաների փաստացի ձեռքբերման և օգտագործման ժամանակ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ստուգում, այդ թվում.

- հիմնական միջոցների և նյութական ակտիվների գույքագրում,
- տրանսպորտային միջոցների պահպանման և վառելիքի ձեռքբերման համար կատարված ծախսերի ստուգում:

Ստուգման արդյունքում պարզվել է հետևյալը.

ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի 2015թ. համար աշխատողների աշխատավարձի վճարման մասով հաստատված ճշտված բյուջեն կազմել է 32880.9 հազ. ռուսական ռուբլի որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 31152.8 հազ. ռուսական ռուբլի:

ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի 2016թ. համար աշխատողների աշխատավարձի վճարման մասով հաստատված ճշտված բյուջեն կազմել է 23852.0 հազ. ռուսական ռուբլի, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 22160.4 հազ. ռուսական ռուբլի:

ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի 2017թ. համար աշխատողների աշխատավարձի վճարման մասով հաստատված ճշտված բյուջեն կազմել է

13194.2 հազ. ռուսական ռուբլի, որի դիմաց 2017թ. օգոստոսի 31-ի դրությամբ դրամարկղային ծախսը կազմել է 8883.6 հազ. ռուսական ռուբլի:

2015 թ. հունվարի 1-ի դրությամբ **ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի** հաշվեկշռում առկա է եղել 6 միավոր տրանսպորտային միջոց և 2015թ. տրասպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 324.6 հազ. ռուսական ռուբլի:

2016 թ. հունվարի 1-ի դրությամբ **ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի** հաշվեկշռում առկա է եղել 5 միավոր տրանսպորտային միջոց և 2016թ. տրասպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 204.2 հազ. ռուսական ռուբլի:

2017 թ. հունվարի 1-ի դրությամբ **ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի** հաշվեկշռում առկա է եղել 4 միավոր տրանսպորտային միջոց և 2017թ. օգոստոսի 31-ի դրությամբ տրասպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 73.9 հազ. ռուսական ռուբլի:

ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի կողմից 2015-2016թթ վաճառվել է թվով 2 ավտոմեքենա Volkswagen Passat 2007 թ. արտադրության գումարով 478.6 հազ. ռուսական ռուբլի և Peugeot Partner 2010 թ. արտադրության գումարով 363.1 հազ. ռուսական ռուբլի:

ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի աշխատակիցների աշխատավարձի վարձատվության, տրանսպորտային միջոցների պահպանման, վառելիքի ձեռքբերման համար կատարված ծախսերի ստուգման արդյունքում համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրության և իրավական ակտերի պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:

Հարկ է նշել, որ **ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական դատարանի** 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման արդյունքում կազմված ակտը վերջինիս կողմից սահմանված կարգով կներկայացվի Հայաստանի Հանրապետությանը:

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի ֆինանսաբյուջետային
վերահսկողության տեսչության
ֆինանսաբյուջետային վերահսկողության
1-ին բաժնի գլխավոր վերահսկող՝

Բաբկեն Հովսեփյան